ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 հոկտեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

148
(2814)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԽԱՅՏԱՌԱԿ ՀԱՇԻՎՆԵՐԸ՝ ԹՎԵՐՈՎ, ՈՒ ՀՖՖ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական ֆուտբոլի խայտառակ ցուցանիշների թիվ մեկ պատասխանատուն ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանն ու իր թիմն են: Տարիներ շարունակ մամուլը գրել է, 15 մլն դոլարից ավելի շրջանառություն ունեցող այս հիմարկում կատարվում են տարօրինակ իրադարձություններ, ու տպավորություն է, որ բացարձակ երկրորդական տեղում է ֆուտբոլը, եւ առաջ է մղվել կոմերցիան ու բիզնեսը: Շրջանառվել ու շրջանառվում են լուրեր, որ ՀՖՖ շինարարությունների հետ կապ ունեն ՔՊ բարձրաստիճան ներկայացուցիչներ Հակոբ Սիմիդյանը, Ռուբեն Ռուբինյանը: Մամուլը գրեց, թե այս տարիների ընթացքում ինչքան են հարստացել ՀՖՖ ղեկավարները (կառուցել են տներ, գնել են թանկարժեք մեքենաներ եւ այլն): Իրավիճակի աբսուրդն այն է, որ ֆուտբոլը սրբություն համարող ֆուտբոլասերները, 2050թ.-ին ֆուտբոլի ազգային հավաքականի համար մրցանակային տեղ խոստացած Նիկոլ Փաշինյանն ու այլ «օբյեկտիվ հայրենասերներ» թքած ունեն, թե ինչ է կատարվում. նրանք հարցեր չեն տալիս այս ամենի թիվ մեկ մեղավորին: Ավելին՝ իշխանությունն արդեն իսկ գծել է, թե ինչպես պետք է այս տարվա դեկտեմբերին կազմակերպի Արմեն Մելիքբեկյանի վերընտրությունը: Տեղեկություններ են հասնում, որ ազգային հավաքականների խայտառակ արդյունքների ֆոնին՝Արմենի՝գոյություն չունեցող վարկանիշը բարձրացնելու համար նախատեսվում է հայտարարել Ազգային մարզադաշտ կառուցելու մասին, ավելին՝տալ կոնկրետ տվյալներ, թե որտեղ է կառուցվելու ու ինչ տեսք է ունենալու այն: Կարեւոր չէ, թե կլինի նոր մարզադաշտ, թե ոչ, կարեւորը հերթական անգամ հասարակությանը կներկայացվի գեղեցիկ, սակայն վիրտուալ մի բան, ինչպես դա արվել է նախկինում բազմիցս, իսկ մինչ այդ մեր հավաքականները կխայտառակվեն ամենուր: Հույս ունենալ, որ Մելիքբեկյանը կամովին կիրաժարվի այդ պաշտոնից, կընդունի, որ ձախողել է, ու ներողություն կխնդրի, ապարդյուն է: Իսկ հիմա թվերով. Մելիքբեկյանի պաշտոնավարման մեկնարկից սկսած՝17 տարեկանների հավաքականը վերջին 12 խաղերից պարտվել է բոլոր 12-ը, ընդունել է 53 գոլ, խփել՝3-ը: 19 տարեկանների հավաքականում իրավիճակն ավելի վատ է. նախ՝այստեղ հրավիրված են 7 ֆուտբոլիստներ դրսից, վերջին 12 խաղերում չեն ունեցել թոփ մրցակիցներ, պարտվել են 8 խաղ, հաղթել՝2-ը, եւ 2 խաղ ավարտել ոչ-ոքի, հանրագումարում բաց են թողել 34 գոլ, խփել՝ ընդամենը 9-ը: Ամենաողբերգական վիճակում 21 տարեկանների հավաքականն է. այս տղաները պետք է փոխարինեն ազգային թիմին ու համարվում են ռեզերվը, իսկ վիճակն այսպիսին է. 24 խաղից պարտվել են 21-ում, 1 խաղ ավարտել են ոչ-ոքի արդյունքով, իսկ տանը հաղթել են Լյուքսեմբուրգին ու Ֆարերյան կղզիների իրենց հասակակիցներին, սակայն նույն թիմերին մրցակցի հարկի տակ պարտվել են: 21 տարեկանների ազգային թիմը 24 խաղերում բաց է թողել 70 գոլ, խփել՝13-ը: Այս տարի մեր երիտասարդական հավաքականը եվրոպական վարկանիշային աղյուսակում գավավիժել է ամենաստորին հորիզոնականներ, «Եվրո 2026»-ի վիճակահանությանը հայտնվել է նույն զամբյուղում Սան Մարինոյի, Ջիբրալթարի ու Անդորրայի հետ:

Մշտապես Նիկոլ Փաշինյանի թելը թելող Սամվել Բաբայանի ղեկավարած «Միասնական հայրենիք» կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար Մարսել Պետրոսյանը կարծում է, որ Արցախի կառավարությունը եւ պատգամավորները պետք է համագործակցեն Հայաստանի իշխանությունների հետ: «Ժողովուրդ» օրաթերթը Մարսել Պետրոսյանից հետաքրքրվեց՝ինչու Արցախի խորհրդարանը, որը փաստացի այս պահին լուծարված չէ, արտահերթ նիստ չի հրավիրում եւ Արցախի ինքնորոշման հարց բարձրացնում: Վերջինս ասաց, որ արտահերթ նիստ ցանկացած պահի կարելի է հրավիրել, դա արդեն ԱԺ աշխատակազմի խնդիրն է եւ այն անձնավորության, որը փոխարինում է ԱԺ նախագահին: «Ես օրեր առաջ իմ ֆեյսբուքյան էջում գրառում էի արել եւ առաջարկել էի ստեղծել ժամանակավոր կառավարություն, հնարավորություն ընձեռել այդ կառավարությանը, որպեսզի տեղահանված արցախցիներով զբաղվի, այսպես կոչված՝ վտարանդի կառավարություն: Իմ առաջարկը, սակայն, արձագանք չի գտել, չգիտեմ՝ինչու: Մենք փորձել ենք պատգամավորներին հավաքել մի վայրում եւ նախապատրաստական աշխատանքներ տանել, բայց չի ստացվում: Ինձ թվում է, թե պատգամավորների մեծ մասի համար այս հարցն այժմեական չէ»,- ասաց Պետրոսյանը: Ի դեպ, Արցախի ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանին, որն ապօրինի գերեվարման մեջ է գտնվում այս օրերին, փոխարինում է նրա տեղակալը՝Գագիկ Բաղունցը, որը նույնպես «Միասնական հայրենիք»-ից է: Մարսել Պետրոսյանին հարցրինք՝իր թիմակցից հետաքրքրվել է արդյոք՝ինչու արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությամբ հանդես չի գալիս. «Ես չեմ կարող ասել՝ինչու. պարոն Բաղունցի հետ խոսակցություն չեմ ունեցել: «Միասնական հայրենիք» կուսակցության համար անհասկանալի պատճառներով պագամավորները չեն ցանկանում արտահերթ նիստ հրավիրել եւ քննարկել ստեղծված իրավիճակը, գոնե վերաբերմունք ցուցադրել Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված բոլոր այն քայլերին, որոնք ուղղված են Արցախից բռնի տեղահանված քաղաքացիների խնդիրների լուծմանը»: Ստացվում է՝իրենք ցանկանում են, մյուս պատգամավորները համաձայն չեն արտահերթ նիստ հրավիրելու գաղափարին. «Չեմ կարող ասել՝համաձայն են, թե ոչ. համենայնդեպս, առայսօր քայլ չեմ տեսել նրանց կողմից: Ես առաջարկել եմ՝հավաքվենք, խոսենք, օրակարգ սահմանենք, թե որոնք են այս պահի դրությամբ առաջնային խնդիրները՝համագործակցելով թեկուզ Հայաստանի իշխանությունների, շահագրգիռ քաղաքական ուժերի եւ միջազգային կազմակերպությունների հետ»: Իսկ թե ինչպես է պատկերացնում համագործակցությունը Նիկոլ Փաշինյանի իշխանության հետ, որի վարած քաղաքականության հետեւանքով է այսօր Արցախը կորսված, Պետրոսյանն ասաց. «Գիտեք, բոլորի հետ պետք է համագործակցել. եթե մենք ունենք օրակարգ եւ այդ օրակարգով ենք շարժվում, ուրեմն պարտավոր ենք շփվել բոլորի հետ: Համագործակցել չի նշանակում լուռ լսել, թե մեզ ով ինչ է ասում: Մենք պետք է հասկանանք, թե ովքեր են այդ օրակարգով շարժվում եւ աջակցում»:

«Ժողովուրդ» օրաթերթը դեռեւս սեպտեմբերին գրել էր, որ խմբագրությունը բազմաթիվ բողոքներ է ստանում, որ սեպտեմբերի 14-ին ՀՀ ոստիկանության ողջ համակարգը ստացել է պարգեւավճարներ, յուրաքանչյուրը՝ մոտավորապես 120.000 դրամ, սակայն ոստիկանության այն աշխատակիցները, որոնք գործուղված են եղել ՀՀ ոստիկանական ակադեմիա՝ վերապատրաստման, պարեկային ծառայության դասընթացների եւ այլն, չեն ստացել պարգեւավճարներ, առանց հիմնավորման: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել ՀՀ ոստիկանության հետ՝պարզելու՝ինչ հիմնավորմամբ եւ ընտրությամբ են ոստիկանության աշխատակիցների մի մասը ստացել պարգեւավճարներ, մի մասը՝ոչ: Օրեր անց միայն ոստիկանությունից մեզ ոչ թե ներկայացրին հարցի պատասխանները, այլ խնդրեցին 30 օր՝տեղեկություն տրամադրելու համար հավելյալ աշխատանք կատարելու նպատակով: Միայն երեկ «Ժողովուրդ» օրաթերթին ՆԳՆ-ից տեղեկացնում են. «ՀՀ ՆԳՆ նախարարի՝12.09.2023 թվականի թիվ 813-Ա հրամանով՝պարգեւատրում են ստացել ՀՀ ՆԳՆ ծառայողները (աշխատողները): Պարգեւատրման համար հիմք է հանդիսացել «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասը, այն է՝պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ ՀՀ օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների եւ (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգեւատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից եւ (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից»: Վերը նշված տերմիններով լեցուն այս տեքստից կարելի է ենթադրել, որ ՆԳՆ նախարար Վահե Ղազարյանը կամ այս պարագայում Արթուր Խուդինյանը կարող են պարգեւատրել բոլոր այն ծառայողներին, որոնք իրենց աշխատանքը որակյալ են կատարել: Չանդրադառնալով այն հարցին, որ նրանք պարտավոր են որակյալ աշխատանք կատարել, միանգամից անդրադառնանք այն կետին, որ մեզ ահազանգած քաղաքացին պնդում է, որ պարգեւներ ստացել են բոլոր աշխատակիցները: Այսինքն՝ ՆԳՆ-ում անխտիր բոլորը պարգեւավճարի արժանի գործեր են կատարում այն պարագայում, երբ հասարակությունը բողոքում է, օրինակ, պարեկների ոչ պատշաճ պահվածքից, ոստիկանները ցույցերի ժամանակ անօրինական բերման են ենթարկում քաղաքացիներին: Թե ինչու են բոլորը ստացել պարգեւավճար, իսկ ՀՀ ոստիկանական ակադեմիա դասընթացների՝ վերապատրաստման ուղարկված աշխատակիցները՝ ոչ, «Ժողովուրդ» օրաթերթը ավելի ուշ կհրապարակի:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ առեղծվածային պայմաններում Հայաստանում հայտնված 1 տոննա կոկաինի գործով քննությունը վերջնական փուլին է մոտեցել, ու ԱԱԾ-ն որոշում կկայացնի: Գրել էինք,որ ԱԱԾ-ի կողմից մի շարք եվրոպական երկրներ նամակներ են ուղարկվել, եւ կոնկրետ հարցադրումներ են արվել, սպասում են կոնկրետ պատասխանների, ու, ըստ էության, շատ պատասխաններ եվրոպական գործընկերներից արդեն ստացել են: Նշենք, որ այս գործով շարունակում են կալանքի տակ մնալ ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանին պատկանող ընկերության աշխատակիցները, որոնցից մեկը կին է: Հիշեցնենք, որ ԱԱԾ-ն հայտնել էր «Մրգենի» ՍՊ ընկերության փաստացի սեփականատիրոջ, ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանի, նույն ընկերության տնօրեն Լ.Ա-ի եւ պահեստապետ Ս.Գ-ի նկատմամբ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց, մասնավորապես՝ 1 տոննա կոկաին ապօրինի իրացնելու եւ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: Վերջիններիս նկատմամբ, որպես խափանման միջոց, ընտրվել է կալանքը, նախկին պատգամավորի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Հավելենք, որ, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալներով, «Մրգենի» ՍՊԸ-ն հիմնադրվել է թավշյա հեղափոխությունից հետո՝ 2018 թվականի հուլիսի 27-ին: Ընկերության տնօրենը Ռուսաստանի քաղաքացի Լեւոն Աթաջանյանն է:

ԶՐՈՒՅՑ

ԱՆԿԼԱՎՆԵՐԸ ՀԱՆՁՆՎԵ՞Լ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է թուրֆագետ Վարուժան Գեղամյանի հետ, որը մեզ հետ զրույցում խոսել է անկլավների վերաբերյալ Ադրբեջանի պահանջների մասին: Անդրադարձել ենք նաեւ Գրանադայում ստորագրված փաստաթղթի բովանդակությանը եւ Բրյուսելում սպասվելիք հանդիպման արդյունքներին:

-Դուք Նիկոլ Փաշինյանի՝ Գրանադայում ունեցած հանդիպումից հետո նշեցիք, որ ստորագրվել է մի փաստաթուղթ, ըստ որի՝ հանձնվել են անկլավները, Զանգեզուրի միջանցքը: Կխնդրեի պարզաբանել, թե ինչու եք այդպես կարծում, քանի որ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը հերքեց այդ տեղեկատվությունը՝ ասելով, որ չի քննարկվել անկլավների վերաբերյալ ոչինչ:

-Նախ՝ անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչի մասին է խոսքը: Հոկտեմբերի 5-ին Իսպանիայի Գրանադա քաղաքում Հայաստանի Հանրապետության դե ֆակտո վարչապետը մի քանի միջնորդների ներկայությամբ արել է գրավոր հայտարարություն, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Ադրբեջանի 86.600 քառ կմ-ը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության 29.800 քառ կմ տարածքը: Ըստ էության, դա քաղաքական հայտարարություն է, որի տակ ստորագրել են այլ միջնորդ երկրներ, եւ այդ հայտարարությունը, փաստորեն, Հարավային Կովկասի վերաբերյալ տեսլականն է, որը ներկայացված է ոչ թե ծրագրերի տեսքով, այլ իրավական կշիռ ունեցող փաստաթղթի տեսքով: Այդ փաստաթուղթը կամ այդ իրավական հայտարարությունը չի ստորագրել կամ դրան չի միացել Ադրբեջանի Հանրապետությունը:

Ի՞նչ հետեւություններ կարող է անել Ադրբեջանը այս հայտարարությունից, նույնիսկ եթե Հայաստանը դրա մեջ այլ բովանդակություն չի դնում, քան այն, ինչը որ հայտարարել է: Երբ որ Հայաստանի Հանրապետության դե ֆակտո վարչապետը սահմանում է, թե, ըստ իր ընկալման, Հարավային Կովկասում որոնք են երկրների սահմաններն ու տարածքները , դա Ադրբեջանին հնարավորություն է տալիս Հայաստանի հետ ունեցած բանակցային ձեւաչափերում այդ իրավական փաստաթղթի վրա հիմնվել՝ որպես հիմք՝ առ այն, թե ինչ ենք անելու տարածքների հետ, որոնք կարող են վիճելի կարգավիճակ ունենալ: Նախ դրանով եւս մեկ անգամ լիարժեքորեն ամրագրվում է, որ Արցախի Հանրապետություն Հայաստանի Հանրապետության վարչապետի ընկալման մեջ չկա: Նա Արցախը ճանաչում է Ադրբեջանի մաս, Արցախը եւս մեկ անգամ այդ փաստաթղթով փակվում է:

Երկրորդ կարեւոր հետեւությունը. այն վիճելի տարածքները, որոնց հանդեպ հավակնություններ ունի Ադրբեջանի Հանրապետությունը, ճանաչվում են, փաստորեն, Ադրբեջանի մաս: Խոսքը, այսպես կոչված, անկլավների մասին է: Այնպես չէ, որ սա առաջին նմանատիպ հայտարարությունն է կամ փաստաթուղթը, որտեղ ֆիքսված էր, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է անկլավները տալ Ադրբեջանին, բայց այս փաստաթղթի յուրօրինակությունը այն է, որ ունի, այսպես կոչված, միջնորդներ, որոնք վերահաստատում են այդ պնդումը: Հետեւաբար Ադրբեջանը Հայաստանի հետ հետագա բանակցություններում, օրինակ՝ հոկտեմբերի վերջին Բրյուսելում, կարող է հանգիստ հարցնել, թե արդյոք մենք ճանաչել ենք տարածքային ամբողջականությունը, դա ներառում է արդյոք անկլավները:

Զրուցեց ԷՄՄԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԳՐԱԴՈՒՄ

ԱՀԱՋԱՆԳ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ադրբեջանական լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է. «Արցախահայության սեփականության իրավունքի, Արցախում մշակութային ժառանգության պահպանման հարցերի հրատապ կարգավորման անհրաժեշտության մասին վերսին ահազանգել եմ միջազգային գործընկերներիս:

Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության ապօրինի օկուպացիայից հետո արցախահայությունը զրկված է ոչ միայն իր պատմական հայրենիքում ազատ եւ անվտանգ ապրելու, այլեւ իր անշարժ եւ շարժական գույքը տնօրինելու, հոգեւոր, պատմամշակութային ժառանգությունը պահպանելու իրավունքներից:

Միջազգային գործընկերներիս խնդրել եմ իրենց մանդատի շրջանակներում ձեռնարկել գործուն քայլեր՝

- ապահովել արցախահայության սեփականության իրավունքի իրացումը,
- հնարավորություն տալ վերջիններիս ազատ եւ անկաշկանդ տնօրինել իրենց գույքը (անշարժ, շարժական, կենդանիներ),
- Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդին պատկանող գույքի անօրինական տնօրինման դեպքում պահանջել վնասի փոխհատուցում,
- նպաստել մշակութային եւ կրոնական ժառանգության պահպանմանն Արցախում, որտեղ 10 հազարից ավելի հուշարձաններ կան: Ինչպես Արցախում այս պահին գտնվող ռուս խաղաղապահները, այնպես էլ ՄԱԿ միջազգային դիտորդները (որոնց Արցախում տեղակայման անհրաժեշտության մասին գրություններ էի ուղարկել միջազգային գործընկերներիս, իսկ միջազգային մի շարք դերակատարներ էլ հաճախ խոսում են դրա կարեւորության մասին) պետք է արգելեն Շուշիի սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու եւ հայկական մյուս կրոնական կոթողների պղծման ու ոչնչացման հանցավոր սցենարի կրկնումը:

Վերոնշյալ խնդիրների մասին, ինչպես վերջերս (https://bitly.ws/XL9p), այնպես էլ նախկինում բազմիցս բարձրաձայնել եմ միջազգային գործընկերներիս տարբեր ձեւաչափերով: Հույս ունեմ, որ դրանք կստանան իրենց պատշաճ լուծումը, որոնց ուղղությամբ իմ կողմից իրականացվող ամենօրյա ջանքերը կլինեն շարունակական»:

ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻ ԽԱՌԸ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Աննա Ժամակոչյանը պաշտոնի նշանակվել է 2020 թվականի հուլիսի 2-ին: Աննա Ժամակոչյանը եւս այն փոխնախարարներից է, որն, ըստ երեւույթին, քաղաքական ոլորտ եկել է՝ ճանապարհի փակելով եւ նոր իշխանությունների վստահությունը շահելով: Անհայտ է, թե ինչպես է արվեստի քննադատը միանգամից դարձել աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար այն դեպքում, երբ այս ոլորտը քննադատության հետ ընդհանրապես կապ չունի: Փոխնախարարի կենսագրությունից հասկանում ենք, որ նա այդքան էլ կայուն չէ մասնագիտության ընտրության հարցում, քանի որ 2012-2014 թվականներին սովորել է Ժամանակակից արվեստի ինստիտուտում, ապա՝ 2012-2016 թվականներին, եղել է Երեւանի պետական համալսարանի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի հայցորդ: 2019 թվականից սովորում է Հայաստանի ամերիկյան համալսարանի թարգմանության հավաստագրման բաժնում: Անհասկանալին այն է, թե ինչու է Ժամակոչյանի կենսագրությունում ամեն ինչ այսքան խառը. նա հոգեբանության եւ փիլիսոփայության ոլորտից կտրուկ անցում է կատարել դեպի արվեստ, ապա՝ սոցիոլոգիա: Աննա Ժամակոչյանը հայտարարագրել է մեկ բնակարան բազմաբնակարան շենքում, որը գտնվում է Երեւանի Շենգավիթ վարչական շրջանում եւ ձեռք է բերվել 2011 թվականին: Փոխնախարար Ժամակոչյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել է 28 դոլար, 821 հազար դրամ եւ 1 222 եվրո: Նրա՝հաշվետու տարվա եկամուտները կազմել են 14 մլն 567 հազար դրամ, որից 14 մլն 498 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից: Հիշեցնենք նաեւ, որ Աննա Ժամակոչյանին շատ տեսնել չի հաջողվում. նա հայտնվում է միայն ինչ-որ հայտարարություններ անելու համար: Հավելենք նաեւ, որ Ժամակոչյանի աշխատանքային փորձը սահմանափակվում է՝ «Սոցիոսկոպ» ՀԿ-ի համահիմնադիր լինելով, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում դասավանդելով եւ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի հետազոտող, ղեկավար լինելով: Այսինքն՝ ինչպես իշխանականների մեծ մասը, այնպես էլ փոխնախարար Ժամակոչյանը Հայաստանի կառավարական համակարգ է եկել առանց որեւէ լուրջ աշխատանքային փորձի:

ԺԱՄԱՆԵԼ Է ԻՍՐԱՅԵԼ

Իսրայելի պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ամերիկյան ինքնաթիռը վայրէջք է կատարել Բեն Գուրիոն օդանավակայանում իսրայելական զինվորականների համար զրահատեխնիկայի բեռով, որը պետք է փոխարինի հոկտեմբերի 7-ին սկսված մարտերի ժամանակ վնասված մեքենաներին. գրում է Times of Israel-ը: Նախարարության պաշտոնյաների խոսքով՝ առաքումը՝ 400 միլիոն շեքել արժողությամբ, ավելի մեծ գնման մաս է կազմում Իսրայելի պաշտպանության ուժերի (IDF) մեքենաների պարկը համալրելու համար: Հաղորդագրության համաձայն՝հետագա մատակարարումները կներառեն նաեւ շտապօգնության զրահապատ մեքենաներ, բեռնատարներ եւ ինժեներական սարքավորումներ:

ՊԱՅՔԱՐԻ ՓԼՎԱԾ ՎՐԱՆՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթը 2021 թվականի մարտի 9-ին գրել էր, որ «Դվին»-ի Արտակ Թովմասյանի պայքարի սպիտակ վրանները «փլվել են»:

Դեռեւս 44-օրյա պատերազմից հետո նախաձեռնված նստացույցին միացած Արտակ Թովմասյանը հայտարարեց քաղաքականություն մուտք գործելու մասին: Նա հանդիսավոր կերպով թանկարժեք վրաններ բերեց Բաղրամյան պողոտա եւ սկսեց Հայաստանը փրկելու գործընթացը: Դեռ այն ժամանակ Թովմասյանը հայրենիքը փրկելու կոչեր էր անում, բարձրաձայնում իշխանափոխության մասին, որ անհրաժեշտ է հեղափոխություն անել եւ ազատել ժողովրդին Նիկոլ Փաշինյանի լծից:

Արտակ Թովմասյանի կոչերին ոչ ոք լուրջ չվերաբերվեց, նստացույցին ոչ ոք չմիացավ, եւ ցույցը ստիպված ցրվեց, իսկ հայրենիք փրկող Արտակ Թովմասյանը ձախողեց քաղաքականություն մտնելու իր փորձերը: Օրերս նա հայտնվեց կրկին հայրենիքը փրկելու կոչերով՝ ասելով, որ «մեզ պետք է կամք, իսկ կամքը կա»:

Հիշեցնենք, որ սա այն ոչ կամային գործարարն է, ում՝ հայրենիքը փրկելու պայքարը տեւեց մի քանի օր: «Դվին»-ի Արտակը այն չկայացած քաղաքական գործիչն է, ով հենց այդ նույն հայրենիքում մի շարք ապօրինի շինություններ սեփականատեր է, իսկ դրանք ապամոնտաժելու պահանջին դեմ է գնում:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը այս տարվա հուլիսի 7-ին գրել էր, որ 2021 թվականի դեկտեմբերի 22-ին Երեւանի քաղաքապետ ընտրված Հրաչյա Սարգսյանը պաշտոնավարման առաջին երեք ամիսների ընթացքում հասցրել է օրինականացրել Հայաստանի ամենաթանկ ծառայություններից մեկը մատուցող «Դվին» հյուրանոցային համալիրի՝ անօրինական կառուցված մոտ 16 հազար քառակուսի մետր տարածքը:

2021 թվականի սեպտեմբերի 14-ին Երեւանի դերասան քաղաքապետ Հայկ Մարությանը հայտարարեց, որ ապօրինի շինություն կա «Դվին» հյուրանոցի վրա: «Ասեմ ավելին՝ բացի այդ ապօրինի կառուցված երկու հարկից, հենց համալիրի վրա տարօրինակ երկուհարկանի մի կառույց էլ է ավելացել՝ ապակեպատ: «Դվին» հյուրանոցի հետեւում գտնվող շենքի վրա են հարկեր ավելացվել, եւ դրա հետ կապված կառուցապատողը երկու ճանապարհ ունի՝ կամ երկու հարկերը պետք է վերացնի, կամ ամբողջ շենքը՝ որպես ինքնակամ կառույց, պետք է օրինականացվի»,- վճռական հայտարարեց Հայկ Մարությանը, ու այլեւս չիմացվեց՝ հարցն ինչպես լուծվեց:

ՄԵԿՆԱԲԱՆԵՑ

ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՍՏԱՑԵԼ

Արցախում տեղի ունեցած հայտնի իրադարձությունների հետեւանքով արցախցիների կողմից ՀՀ տեղափոխվելուց հետո տարբեր շրջանակների կողմից սկսվել են ամենատարբեր տեղեկություններ շրջանառվել նախկին ու գործող պաշտոնյաների վերաբերյալ՝ հափշտակություններ, պետական տրանսպորտային միջոցների յուրացման դեպքեր եւ այլն:

Օրերս «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ էին հասել այն մասին, որ Արցախի նախկին պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը պաշտոնը թողնելուց առաջ Արցախում գործող հիմնադրամներից 150 մլն դրամի չափով փոխառություն էր ստացել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ է հաստատել Արցախի ներդրումային, իսկ հետո՝ նաեւ ԱՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամների տնօրենների հետ:

Արցախի ներդրումային հիմնադրամի տնօրեն Սեւակ Հարությունյանը մեզ հետ զրույցում հայտարարեց, որ այն իրականությանը չի համապատասխանում. Գուրգեն Ներսիսյանը հիմնադրամից փոխառություն չի ստացել, որովհետեւ եթե ստացած լիներ, ապա ինքը պետք է տրամադրեր այն, իսկ նման բան չի եղել: Նա հավելեց, որ Գուրգեն Ներսիսյանի պաշտոնավարման ընթացքում վերջինս, որպես հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, երբեւէ նույնիսկ ծանոթ կամ մերձավոր անձի համար փոխառություն տրամադրելու հարց չէր բարձրացրել, ավելին՝ նրա օրոք հիմնադրամի կողմից վարկավորման ծրագրերը համարյա դադարեցվել են, եւ սկսվել է նախկինում տրված փոխառությունների հավաքագրման գործընթացը:

Երբ բոլորը համարում էին, թե շրջափակման ընթացքում այդ հարցերը օրակարգային չեն, հիմնադրամը դատարան էր ներկայացրել մի քանի միլիարդի հասնող պարտավորությունների բռնագանձման պահանջ, որում մեծ էին Գ. Ներսիսյանի ջանքերը: Ս. Հարությունյանը շեշտեց նաեւ, որ վերջին օրերին այդ տեղեկության կապակցությամբ շատ են դիմել իրեն, եւ ինքը բոլորին պարզաբանել է, որ այդ տեղեկությունը կեղծ է:

Արցախի գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի տնօրեն Հայկ Ադամյանն էլ հայտնեց, որ ինքը այդ պաշտոնից ազատվել է 2023թ. սեպտեմբեր ամսին, երբ Գուրգեն Ներսիսյանը այլեւս պետական նախարար չէր: Համատեղ աշխատանքի ընթացքում Գուրգեն Ներսիսյանը երբեւէ հիմնադրամից գումար չէր ստացել, ավելին՝ նրա պաշտոնավարման ընթացքում ամբողջությամբ կասեցվել է նախկինում կնքված պայմանագրերի հիման վրա գումարների տրամադրման գործընթացը, իսկ նոր վարկեր տրամադրվել են միայն նրանց, որոնց կոնկրետ խնդիրներ էին առաջադրվել շրջափակման հետեւանքները մեղմելու համար, ընդ որում՝ խոսքը մինչեւ 3 մլն դրամի չափով փոխառությունների մասին է: «Ժողովուրդ» օրաթերթը զրուցեց նաեւ Գուրգեն Ներսիսյանի հետ, որը հայտնեց, թե ինքը եւս լսել է այդ կեղծ տեղեկության մասին:

«Ամենայն հավանականությամբ, այդ լուրերը տարածում են նրանք, ովքեր, սեփական փորձի հիման վրա, ուղղակի չեն պատկերացնում, որ հնարավոր է լինել Արցախում գործող հիմնադրամների հոգաբարձուների նախագահ ու չօգտվել այդ հնարավորությունից: Ես երեւի միակ արցախցին եմ, որն Արցախում գործող ոչ մի հիմնադրամից երբեւէ հազար դրամ գումար անգամ չեմ ստացել, կրկնում եմ՝ երբեւէ: Ավելին ասեմ՝ իմ պաշտոնավարման ընթացքում հիմնադրամներից գումար չեն ստացել նույնիսկ իմ ընկերները, բարեկամները, մտերիմները: Եթե հանկարծ նման մի դեպք լինի, կարող եք հանգիստ վերագրել ինձ: Իմ պաշտոնավարման ընթացքում ինձ ճանաչող գրեթե բոլորը ինձանից նեղանում էին հենց այդ պատճառով, որ իմ դիրքը նրանց համար որեւէ առավելություն կամ հնարավորություն չէր ստեղծում: Բացի դրանից, նման լուրեր տարածողները այնքան պրիմիտիվ են, որ նույնիսկ չեն հասկանում, որ այդ ամենը շատ հեշտ պարզվող բան է, եւ ամենեւին փաստաթղթերի ոչնչացման մասին տարածվող լուրերը իրենց չեն կարող փրկել: Անկախ նրանից, թե ինչ փաստաթղթեր են ոչնչացվել, ի վերջո, էլեկտրոնային բազաներ կան, ինչ-որ մեկին գումար տալու համար բանկային հաշվեհամարներ են բացվում, փոխանցումներ են կատարվում. դրանք հո չե՞ս կարող ոչնչացնել: Ամեն դեպքում, այդպիսի երեւույթներն ինձ համար արդեն զարմանալի չեն: Ես այդ գործիքին արդեն մի քանի անգամ բախվել եմ»,-հայտարարեց Ներսիսյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԱՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆ

Հայաստանում արձանագրվում է սուր շնչառական վարակներով պայմանավորված բարձր ակտիվություն ինչպես ամբուլատոր պոլիկլինիկական, հիվանդանոցային կազմակերպություններ դիմելիության, այնպես էլ շտապօգնության կանչերում:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՀՀ առողջապահության նախարարության տարածած հաղորդագրությունից:

Նշվում է, որ հիվանդացությունը համաճարակային շեմից բարձր է 1.3 անգամ, իսկ նախորդ տարվա միեւնույն ժամանակահատվածի համեմատ՝ 1.6 անգամ:

«Վերլուծությունը, ըստ տարիքային խմբերի, փաստում է, որ հիվանդացության 70%-ն արձանագրվել է մինչեւ 18 տարեկանների շրջանում, որից 57%-ը՝ մինչեւ 4 տարեկանների:

Գրիպով չհիվանդանալու, ինչպես նաեւ հիվանդության բարդություններից խուսափելու լավագույն միջոցը պատվաստումն է:

Նշենք, որ հանրապետության բոլոր պոլիկլինիկաներն ու ամբուլատորիաներն ապահովված են սեզոնային գրիպի պատվաստանյութով, եւ բոլոր նրանք, ովքեր դեռ չեն ստացել սեզոնային գրիպի դեմ պատվաստում, կարող են դիմել եւ պատվաստվել:

Պատվաստումները կատարվում են կամավորության սկզբունքով, անվճար, պետական պատվերի շրջանակներում»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԿՄՆԱ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ

Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ռուբիկ Մխիթարյանը քիչ առաջ մերժել է արցախցի Տաթեւիկ Վիրաբյանի կալանավորման դեմ պաշտպանների ներկայացրած բողոքը:

Տաթեւ Վիրաբյանը կշարունակի մնալ կալանավորված. այս մասին հայտնում է Արսեն Բաբայանը:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Սաուդյան Արաբիայում տեղի ունեցած Իսլամական համագործակցության կազմակերպության նիստի շրջանակում հանդիպել են Ադրբեջանի եւ Թուրքիայի արտգործնախարարները: Նրանք քննարկել են տարածաշրջանային զարգացումները, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացը:

Ջիդդայում տեղի է ունեցել նաեւ Ադրբեջանի եւ Իրանի գլխավոր դիվանագետների հանդիպումը: Բայրամովի եւ Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի բանակցությունների օրակարգում եւս եղել են տարածաշրջանում տիրող իրավիճակը, զարգացումները իսրայելա-պաղեստինյան հակամարտության շրջանակում, ինչպես նաեւ երկկողմ գործակցության հեռանկարները:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ԱԼԱՎԵՐԴԻՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հոկտեմբերի 16-ին սպանություն է տեղի ունեցել Ալավերդիում:



Քննչական կոմիտեն այս դեպքից մանրամասներ է հայտնել: «2023թ. հոկտեմբերի 16-ին «Ալավերդի բժշկական կենտրոն»-ից ՀՀ ՆԳՆ ոստիկանության Թումանյանի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ Լոռու մարզի Աքորի գյուղում՝ տներից մեկի դիմաց, մահացած անձ կա. վերջինս նույն տան բնակիչ 50-ամյա Ա.Ս.-ն է, որի մարմնի արտաքին զննությամբ հայտնաբերվել են կտրածծակած վերքեր:

Դեպքի առթիվ 2023թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Կատարվել է դեպքի վայրի զննություն, հարցաքննվել են դեպքին ականատես անձինք: Վերցվել են նմուշներ, նշանակվել են դատաբժշկական, դատահետքաբանական փորձաքննություններ:

Ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ 16.10.2023թ.՝ ժամը 21:00-ի սահմաններում, Աքորի գյուղի 2-րդ փողոցում երթեւեկելիս խափանվել է նույն գյուղի 22-ամյա երիտասարդի կողմից վարած «Վազ 2106» մակնիշի ավտոմեքենան: Ճանապարհի բանուկ մասում մեքենան կայանելու առիթով վիճաբանություն է առաջացել նշված փողոցով իր անձնական օգտագործման «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենայով երթեւեկել ցանկացող, նույն գյուղի 50-ամյա բնակչի եւ նշված 22-ամյա երիտասարդի հոր՝ 45-ամյա բնակչի միջեւ: Դրա ընթացքում, ըստ առկա տվյալների, 50-ամյա տղամարդու կողմից հնչել են սեռական բնույթի հայհոյանքներ, նշված երկու անձինք բռունցքներով փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց:

Դեպքին միջամտել է 45-ամյա տղամարդու որդին, որը, «Վազ 2106» ավտոմեքենայի սրահից վերցնելով սուր կտրող առարկա, Ա.Ս.-ին կյանքից զրկելու դիտավորությամբ երեք անգամ հարվածել է վերջինիս ձախ թիկնային հատվածին, կրծքավանդակի առաջային մակերեսի աջ հատվածին եւ սպանել նրան, որից հետո դիմել է փախուստի:

Նույն օրը՝ ժամը 01:30-ին, 22-ամյա երիտասարդը հայտնաբերվել է իրենց տանը եւ տեղափոխվել ոստիկանության Թումանյանի բաժին, ապա ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին: Քննիչի որոշմամբ՝ վերջինս ձերբակալվել է՝ վերոնշյալ հանցագործությունը կատարելու մեջ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածանքի հիմքով:

Քննությամբ պարզվել է, որ դեպքի պահին ինչպես 22-ամյա երիտասարդը, այնպես էլ տուժողը եղել են ալկոհոլի ազդեցության տակ:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ Աքորի գյուղի 22-ամյա բնակչի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով (սպանություն) եւ 344-րդ հոդվածի 2-րդ մասով (Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելը):

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ վերջինիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է, եւ մեղադրյալը կալանավորվել է:

Նախաքննությունը շարունակվում է»:

ՔՐԵԱԿԱՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ԱՋԱՓՆՅԱԿՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ձերբակալվել է Աջափնյակի դատարանի մոտ կրակոցներ արձակած անձը: Նա 1983 թվականին ծնված քաղաքացի է, որն իրավապահներին հայտնել է, որ ինքն է կրակել Շենգավիթում քրեական պատմություններով հայտնի Սահակի վրա, ու հրաժարվել է այլ հարցերի պատասխանել:

Shamshyan.com-ը գրել էր, որ կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 16:10-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվել, որ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի բակում՝ ավտոկայանատեղիում, կրակոցներ են հնչել:

«Ժողովուրդ» օրաթերթին այս դեպքից մանրամասներ էին հայտնի դարձել: Մեզ բացառիկ տեղեկություններ հասան, որ դատարանում կրակոցներից վիրավորվել է Շենգավիթ վարչական շրջանում քրեական պատմություններով հայտնի Սահակը, որին դատարանից տեղափոխել են հիվանդանոց: Քննչական կոմիտեն այս դեպքից եւս մանրամասներ էր հայտնել: «Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Աջափնյակի նստավայրի բակում կրակոցներ հնչելու վերաբերյալ ահազանգ է ստացվել: Դեպքի առթիվ նախաձեռնված է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (սպանության փորձը): Կատարվում է քննություն: Մեկ անձ բուժօգնության է դիմել բուժհաստատություն: Այս պահին ՀՀ ՔԿ Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչները՝ բաժնի պետի գլխավորությամբ, դեպքի վայրում են, կատարվում են առաջնային, անհետաձգելի քննչական գործողություններ: Կրակոցների արդյունքում դատախազ չի տուժել, դատարանի բակում կայանված պետական համարանիշներով ավտոմեքենայի վրա առկա են եղել կրակոցի հետքեր: Դեպքի հանգամանքները պարզվում են: Ձեռք բերված տվյալների վերաբերյալ թույլատրելիության սահմաններում ՀՀ քննչական կոմիտեն հետագայում հաղորդագրությամբ հանդես կգա»:

ԱՏՐՃԱՆԱԿ՝ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՄՈՏ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել 15-ամյա տղայի մոտ դպրոցում օդաճնշիչ ատրճանակի հայտնաբերման դեպքից: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ 15-ամյա տղան ոստիկանությունում պատմել է, որ զենքը գտել է list.az կայքից: Նա հայտնել է, որ այն գտել է իր օգտագործման համար, քանի որ շատ է ցանկացել ունենալ: Իրավապահները հարց են ուղղել անչափահաս տղային, թե ինչու է զենքը իր մոտ պահել, բայց նա չի կարողացել պատասխանել: Տղային հարցաքննելուց հետո բաց են թողել: Կատարվում է քննություն:

Ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները հոկտեմբերի 17-ին Բաբաջանյան փողոցի ավագ դպրոց հերթական ստուգայցի ժամանակ, ապօրինի օդաճնշիչ ատրճանակ պահելու կասկածանքով, բաժին են ներկայացրել 15-ամյա պատանու: Բաժնում նա իր պայուսակից ներկայացրել է օդաճնշիչ ատրճանակ:

Կատարվում է նախաքննություն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԼՌՈՒՄ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին «Զատիկ» երեխաների աջակցման կենտրոնում հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած դեպքի մասով ուշագրավ մանրամասներ են հայտնի դարձել:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները հայտնում են, որ 15-ամյա տղան, հայտնվելով Ավանի հոգեկան առողջության կենտրոնում, պատմել է, թե ինչպես են իրեն վերաբերվել այդ կենտրոնում: Երեխան պատմել է, որ իրեն մի քանի տղաներ՝ Հովհաննեսը, Ջոնը եւ Աբրիկը, բռնության են ենթարկել եւ սեքսուալ բնույթի գործողություններ են կատարել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ տղաներից Աբրիկը մեկ ամսով կալանավորվել է:

Նշենք, որ դեպքի ժամանակ կենտրոնի տնօրենը Աստղիկ Վարդանյանն է եղել: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Աստղիկ Վարդանյանի հետ: Տիկին Վարդանյանը նախ պնդեց, որ կապ հաստատենք ներկա պահին տնօրենի պաշտոնը ստանձնած Անգին Արշակյանի հետ, քանի որ դեպքը տեղի է ունեցել իր պաշտոնավարման օրոք. պետք է հասկանայինք, թե ինչպես է նման բան կատարվել այդ կենտրոնում, եւ արդյոք ճիշտ են այն խոսակցությունները իր մասին, որ երեխաներին ընդհանարապես լավ չեն վերաբերվում:

Տիկին Աստղիկը, իմանալով, որ իր հետ խոսողը լրագրող է, պատասխանում է, որ ներկա պահին ինքը սեմինարի է եւ հետո կզանգահարի, իսկ հետո չպատասխանեց մեր հեռախոսազանգերին եւ դարձավ անհասանելի:

Ինչ վերաբերում է ներկա պահին կենտրոնի տնօրենի պաշտոնը ստանձնած Անգին Արշակյանին, պետք է նշենք, որ ոչ մի հեռախոսազանգի եւ նամակագրության պատասխան մենք չստացանք:

Այս ամենից պարզ է դառնում, որ այս կենտրոնում ինչ-որ բան այն չէ, քանի որ երեխային բռնության ենթարկելու դեպքի մասին կառույցը կասկածելիորեն լռում է:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը այս խնդրին անդրադարձել էր, եւ ի պատասխան մեր հոդվածների՝ ՄԻՊ-ը ուսումնասիրություններ է սկսել՝ կապված այս կենտրոնի հետ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 18-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 67 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

3 ՏԱՐՈՎ ԱՋԱՏԱՋՐԿՎԵԼ Է

Բերդ համայնքի Նավուր բնակավայրի բնակիչ, նախկինում դատված, միջնակարգ կրթությամբ, չամուսնացած, 1975թ. ծնված Մովսես Եսայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2018թ.-ի հոկտեմբերից մինչեւ 2019թ.-ի մայիսն ընկած ժամանակահատվածում «Հայանտառ» ՊՈԱԿ «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքից ապօրինի հատել է 74 հատ տարբեր տեսակի կանգուն ծառեր՝ պետությանը պատճառելով 6 միլիոն 96 հազար ՀՀ դրամի գույքային վնաս: Մ. Եսայանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296 հոդվածի 3-րդ մասով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Սույն քրեական գործով, որպես իրեղեն ապացույց, դատարան է ներկայացվել բենզասղոցը, որով կատարվել են ապօրինի ծառահատումները: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը Մ. Եսայանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես պատասխանատվությունը եւ պատիժը մեղմացնող հանգամանք է հաշվի առել այն, որ նա 530 հազար ՀՀ դրամի չափով վերականգնել է իր կողմից պետությանը պատճառված վնասը, բնութագրվում է դրական, խոստովանել է մեղքը եւ անկեղծորեն զղջացել արարքի համար: Դատարանը Մ. Եսայանի պատասխանատվությունը եւ պատիժը ծանրացնող հանգամանք է դիտել հանցանքը կատարելու ռեցիդիվը: 2023թ. մայիսի 15-ին դատավոր Սամվել Մարդանյանը վճռել է Մ. Եսայանին մեղավոր ճանաչել նրան առաջադրված հոդվածով եւ նրան դատապարտել 3 տարի ժամկետով ազատազրկման, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ «ստորագրություն չհեռանալու մասին», թողնել անփոփոխ մինչեւ դատավճռի՝ օրինական ուժի մտնելը, սույն քրեական գործով Տավուշի մարզի դատախազության դատախազ Հ. Աղասարյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը բավարարել ամբողջությամբ եւ Մ. Եսայանից, հօգուտ Հայաստանի Հանրապետության, բռնագանձել 5 միլիոն 556 հազար ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված վնասի փոխհատուցման գումար, Մ. Եսայանի գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ մինչեւ քաղաքացիական հայցի կատարումը, դատավճիռն օրինական ուժ մեջ մտնելուց հետո սույն քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված «Հայանտառ» ՊՈԱԿ «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի հատուկ պահպանվող տարածքում գտնվող 3,5 խմ, 2 խմ, 6 խմ, 4 խմ փայտանյութը եւ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի իրեղեն ապացույցների պահպանման սենյակում գտնվող բենզասղոցը բռնագրավել՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության: Այդ դատավճռի դեմ Մ. Եսայանը վերաքննիչ բողոք է ներկայացրել, որով խնդրել է բեկանել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռը, կայացնել նոր դատական ակտ, իր նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկման ձեւով, 1 տարի ժամկետով,ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել եւ սահմանել փորձաշրջան՝2 տարի ժամկետով: Սույն քրեական գործով վերաքննիչ քրեական դատարանում նիստեր են կայանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՅՏՆԻ Է

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ կառավարությունը հոկտեմբերի 19-ի նիստում հաստատել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով (առկա, հեռակա) 2024/2025 ուսումնական տարվա մասնագիտությունների եւ ընդունելության քննությունների ցանկը:

Հիմնավորման համաձայն՝ 2024-2025 ուստարվա դիմորդները ընդունելության միասնական քննություններ կարող են հայտագրել եւ հանձնել 2 անգամ, որից առաջին փուլի դիմումների հայտագրումը ընդգրկում է տվյալ տարվա դեկտեմբերի 15-ից մինչեւ հունվարի 25-ը ընկած ժամանակահատվածը եւ տվյալ տարվա հունվարին հանձնվող միասնական քննությունները: Նախորդ՝ 2023-2024 ուստարվա համար նախատեսված ցանկի համեմատ՝ նախագծում որոշակի փոփոխություններ են կատարվել, մասնավորապես՝ ԵՊՀ-ի «Միջուկային ռեակտորների ֆիզիկա», «Նանոֆիզիկա եւ առաջատար տեխնոլոգիաներ», «Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա» կրթական ծրագրերը հանվել են ցանկից, որպես առանձին մասնագիտություններ դրանք ներառված են «Ֆիզիկա» ընդհանրական մասնագիտության շրջանակում, ցանկը լրացվել է նոր՝ «Ռադիոֆիզիկա եւ համակարգչային տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ: Այս փոփոխությունները պայմանավորված են ԵՊՀ-ում իրականացվող բարեփոխումների, կառուցվածքային փոփոխությունների, կրթական ծրագրերի խոշորացման, արդիականացման գործընթացներով: Միաժամանակ, համալսարանում «Ֆիզիկա», «Ռադիոֆիզիկա» մասնագիտությունների համար նախատեսվող քննությունների շարքում չի ընդգրկվել «Անգլերեն» քննությունը՝ որպես կամընտրական քննություն, ամրագրել են միայն «Ֆիզիկա» եւ «Մաթեմատիկա» առարկաների քննությունները: Փոփոխություններ են կատարվել նաեւ բուհերի «Միջազգային հարաբերություններ» կրթական ծրագրի ընդունելության քննություններում՝ «Հայոց լեզվի» քննությունը սահմանվել է պարտադիր, «Հայոց պատմության» եւ «Օտար լեզվի» քննությունները՝ կամընտրական:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մասնագիտությունների ցանկում ներառվել են նոր՝ «Բլոկչեյն եւ ՎԵԲ3 տեխնոլոգիաներ» եւ «Ավիատիեզերական ճարտարագիտություն» կրթական ծրագրերը՝ համապատասխանաբար «Տեղեկատվական անվտանգություն», «Ավիացիոն եւ հրթիռային տեխնիկա» շրջանակում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի՝ 2024-2025 ուստարվա ընդունելության բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերի մասնագիտությունների ցանկում «Ագրոնոմիա», «Անասնաբուծություն» եւ «Անասնաբուժություն» մասնագիտություններով ընդունվելու համար «Մաթեմատիկան»՝ որպես պարտադիր մրցութային առարկա, փոխարինվել է «Կենսաբանություն» առարկայով: Հաշվի առնելով «Ճշգրիտ գյուղատնտեսություն» եւ «Տրանսպորտային եւ լոգիստիկ համակարգեր» կրթական ծրագրերով սովորողների համար «Անգլերեն», իսկ «Սննդամթերքի անվտանգություն» կրթական ծրագրով սովորողների համար՝ «Քիմիա» առարկայի իմացության կարեւորությունը՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի առկա եւ հեռակա ուսուցման ձեւերի որոշ կրթական ծրագրերի ընդունելության քննությունների ցանկում կատարվել են փոփոխություններ, մասնավորապես՝ «Ագրոէկոլոգիա», «Ագրոնոմիա, սելեկցիա եւ գենետիկա», «Բույսերի պաշտպանություն», «Ջերմատնային ագրոտեխնոլոգիա», «Կենդանագիտություն եւ կենսատեխնոլոգիա», «Անտառային տնտեսություն եւ բնակավայրի կանաչապատում», «Անասնաբուժություն» կրթական ծրագրերի ընդունելության քննությունները փոխարինվել են «Կենսաբանություն», «Ֆիզիկա» կամ «Քիմիա» առարկաներով:

Կառավարությունն ընդունել է մեկ այլ որոշում, որը կնպաստի նախադպրոցական կրթության ոլորտում միասնական քաղաքականության իրականացմանը: Արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացը՝ ապահովելով յուրաքանչյուր երեխայի համար մատչելի եւ հասանելի կրթության հնարավորություն: Ըստ այդմ՝ նախատեսվում է նաեւ, որ 2023 թ. սեպտեմբերի 1-ից զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի երեխաները, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետեւանքով զոհված (մահացած) կամ ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետեւանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաների նախադպրոցական կրթությունը կիրականացվի պետական բյուջեի հաշվին:

ՕՐԵՆՔ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ ՑԱՆԿԸ

Կառավարությունը հոկտեմբերի 19-ի նիստում հաստատեց պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքների կատարմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ օրենքի համաձայն՝ պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվության տրամադրումը ՀՀ քաղաքացուն, օտարերկրյա քաղաքացուն եւ քաղաքացիություն չունեցող անձին մերժվում է, եթե նա տառապում է Կառավարության հաստատած ցանկում ընդգրկված այնպիսի հիվանդությամբ, որի առկայությունը խոչընդոտում է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքների կատարումը:

Նախագծով առաջարկվող հիվանդությունների ցանկը տարածվելու է բոլոր ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց վրա՝ անկախ կարգավիճակից, զբաղեցրած պաշտոնից եւ այլ հանգամանքներից:

Այդ ցանկում ընդգրկված են հետեւյալ հիվանդությունները.

1. Օրգանական (ներառյալ սիմպտոմատիկ) հոգեկան խանգարումներ (F00-F09),
2. Հոգեկան եւ վարքային խանգարումներ հոգեակտիվ նյութերի գործածման հետեւանքով (F10-F19),
3. Շիզոֆրենիա, շիզոտիպային եւ զառանցանքային խանգարումներ (F20-F29),
4. Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ (F30-F39),
5. Սթրեսի հետ կապված նեւրոտիկ եւ սոմատոֆորմ խանգարումներ (F40-F48),
6. Չափահասի անձի եւ վարքի խանգարումներ (F60-F69),
7. Մտավոր հետամնացություն (F70-F79),
8. Էպիլեպսիա (G40):

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 23-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Մ. Ավետիսյան 2-րդ փողոց, 17ա շենք, 5 հասցեում գտնվող 30,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19750000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 06.11.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 06.12.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարիամ Գեւորգի Մուշեղյանը կորցրել է իր՝ Լենինականի N33 ՄՊՏՈՒ-ի «Կարուձեւ» մասնագիտական խմբակի 128856 դիպլոմը՝ տրված 2002 թվականին:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Կառավարությունը հոկտեմբերի 19-ի նիստում հաստատեց «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ներկայացնելով նախագիծը, նշեց, որ Հայաստանի՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրով նախատեսվում է, որ պետք է ստեղծվի Ակադեմիական քաղաք՝ որպես բարձրագույն որակյալ կրթության եւ հետազոտության համար արդիական միջավայր:

«Ակադեմիական քաղաքի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է լավագույն ստանդարտներին համահունչ եւ միջազգայնորեն մրցունակ բարձրագույն կրթություն եւ գիտություն ունենալու, ինչպես նաեւ այս երկու ոլորտներն արդյունավետ ինտեգրելու նպատակներով:

Բուհական կրթության մեջ հետազոտական բաղադրիչի ավելացումը կապահովվի գիտելիքի եւ հմտությունների ձեռքբերումն ու ամրապնդումը կիրառության մեջ եւ իրական համատեքստում:

Ակադեմիական քաղաքը նաեւ երաշխավորելու է ձեռք բերված գիտելիքի լավագույն կիրառությունը՝ ապահովելով հետազոտությունների գերազանցության, կիրառական արդյունքների հայտնաբերման, զարգացման եւ դրանց փոխանցման, նորարարական գործունեության խթանման եւ մտավոր սեփականության պաշտպանության սկզբունքները՝ այսպիսով ծառայելով հանրությանը:

Նաեւ հանրային եւ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ ապահովելու ենք ստեղծվող գիտելիքի, տեխնոլոգիաների եւ նորարարությունների ներդրումն ու ծառայեցումը հանրային բարեկեցությանն ու առաջընթացին:

«Ակադեմիական քաղաք» ծրագիրն իրականացնելու նպատակով այս տարվա ապրիլին ստեղծվել էր «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը»,-ասաց Ժաննա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ Ակադեմիական քաղաքի հայեցակարգով սահմանվում են Ակադեմիական քաղաք ստեղծելու նպատակները, խնդիրները, Ակադեմիական քաղաքի կլաստերները, ուսանողների, դասախոսների, գիտական ու վարչական աշխատողների նախատեսվող թիվը, այն ենթակառուցվածքները, որոնք պետք է ապահովվեն Ակադեմիական քաղաքում:

«Ֆիզիկական տեղադիրքի համար նախատեսվում են երկու տեղամասեր՝ Երեւանի 17-րդ թաղամասին հարող տարածքը, որի գերակշռող մասը պետական կամ համայնքային սեփականություն է, եւ Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքը, որոնց գումարային մակերեսը կազմում է շուրջ 700 հեկտար: Հիմնական տեղամասը լինելու է 17-րդ թաղամասին հարող տարածքը, իսկ «Հայֆիլմի» տարածքին անդրադառնալու ենք այն պարագայում, երբ գլխավոր հատակագծով դրա կարիքը լինի: Ակադեմիական քաղաքի տարածքները նախատեսվելու են այն տրամաբանությամբ, որ հնարավորություն ունենան տեղակայելու մինչեւ 16 բուհ՝ օրենքով նախատեսված մինչեւ 8 պետական խոշորացված բուհեր եւ մինչեւ 8 մասնավոր կամ միջազգային բուհեր:

Այս պահին հայեցակարգում մանրամասն նկարագրված են 4 կլաստերները՝ տեխնոլոգիական, արվեստների, կրթական եւ սպայական: Ակադեմիական քաղաքը հարում է մեկ մայրուղու, այն Երեւանին կապվելու է նաեւ երկաթգծով, որի մի մասն արդեն անցնում է հիմնական տեղամասով:

Նախատեսվում է, որ Ակադեմիական քաղաքի ներսում տեղաշարժը կունենա հատուկ կարգավորում՝ կազմակերպվելով հեծանիվներով, էլեկտրական տրանսպորտով եւ այլ եղանակներով:

Ընդհանուր առմամբ, այստեղ աշխատելու եւ բնակվելու է մոտ 44 հազար մարդ»,- ասաց նախարարը:

Նախարարի խոսքով՝ արդեն կան պայմանավորվածություններ միջազգային հեղինակավոր ճարտարապետական GMP կազմակերպության եւ կառուցապատող ընկերությունների հետ:

Ժամանակացույցը երեք փուլ է ունենալու՝ նախագծման փուլ, որը կսկսվի հոկտեմբերից եւ ավարտին կհասցվի 2025-ի սեպտեմբերին, կառուցման փուլ, որը փուլերով է լինելու, կսկսվի 2025-ի հոկտեմբերից եւ կավարտվի 2029-ի դեկտեմբերին, եւ սպասարկման փուլ, որը ողջ ծավալով կսկսվի 2030-ի հունվարից»,- ընդգծեց նախարարը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ՏԵՂԱՎՈՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը հոկտեմբերի 4-ին եղել էր Վարդենիս համայնքում եւ նկատել, որ Արցախից բռնի տեղահանված քաղաքացիները բնակվում են Ոսկեպար գյուղի մանկապարտեզում եւ Վեդու Եվրոպական քոլեջում:

Ինչպես արդեն արձանագրել էինք, արցախցի մի քանի ընտանիքներ ապրում են նույն սենյակում եւ օգտվում նույն խոհանոցից: «Ժողովուրդ» օրաթերթը կապվեց Վեդի համայնքի ղեկավարի օգնական Պատվական Մարգարյանի հետ՝ պարզելու, թե արդյոք ինչ գործողություններ են ձեռնարկվում եղանակային վատ պայմանների ընթացքում, արդյոք պատրաստվում են նրանց ջեռուցմամբ ապահովել, եւ ինչ են պատրաստվում անել այդ ուղղությամբ:

Այստեղ պայմաններն անմարդկային են, քանի որ մի հարկի տակ ապրում են 40-60 մարդ, սակայն, ինչպես նշեց Վեդու համայնքապետի օգնականը, պայմանները բարելավելու համար ջեռուցման համարկարգը Ոսկեպարում պատրաստ է, իսկ Վեդու Եվրոպական քոլեջում ընթացքի մեջ է:

«Ժողովուրդ» օրաթերթը նույն ժամանակահատվածում եղել էր նաեւ Մասիս համայնքի մարզադպրոցներից մեկում, որտեղ մարզադահլիճում տեղավորվել էին շուրջ 140 արցախահայ: Մասիսի համայնքապետարանից մեզ տեղեկացրին, որ բոլորին հատկացվել են կացարաններ, իսկ մարզադպրոցում բնակվողների մի մասը տեղավորվել են իրենց հարազատների տներում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԹԱՂԱՊԵՏԻ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Նոր Նորք վարչական շրջանի 6-րդ զանգվածի Լյուքսեմբուրգ 1-ին նրբանցքի 6-րդ շենքի բնակիչները ահազանգում են՝ պատմելով, որ արդեն տեւական ժամանակ է, ինչ իրենց բակը քանդել են եւ վերանորոգման ոչ մի աշխատանք չեն իրականացնում:

Բնակչի խոսքով՝ արդեն անհնար է բակ մուտք գործել: «Ամռանը մեր բակը քանդեցին՝ ասելով, որ վերանորոգման աշխատանքներ են ընթանալու, եւ ամբողջովին այն կկառուցեն, սակայն ոչ մի բան չարեցին, ամբողջ ամառ անցավ փոշու ու կեղտի մեջ, իսկ հիմա արդեն անձրեւներ են, եւ բակ մտնել հնարավոր չէ: Մեզ ամբողջ ամառ թաղապետը ու կոմունալ բաժնի պետը խաբեցին: Պահանջում էինք, որ արագացնեն, էլ հնարավոր չէր, ինչքա՞ն պետք է փոշու ու կեղտի մեջ ապրենք: Ամեն օր խաբում էին, ասում՝ շուտով կլինի, ոչինչ էլ չարեցին: Թաղապետարանի Թեժ գիծ էլ եմ զանգել, խաբեցին ու չարձագանքեցին»,- պատմում է բնակիչներից Ռոզա Սարգսյանը: Մենք փորձեցինք կապ հաստատել տվյալ վարչական շրջանի թաղապետի հետ. պարզվում է բնակիչների բողոքը եւ պահանջը շատ ճիշտ են. անգործությունից այնքան են հոգնել, որ ոչ մի հեռախոսազանգի չեն պատասխանում կամ էլ ընդհանրապես չեն արձագանքում:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԹԱՏՐՈՆ

ՍՏԱՑԱՎ «ԱԶԳԱՅԻՆ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ գործադիրի որոշմամբ՝ Երեւանի Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնին շնորհվել է «ազգային» կարգավիճակ:

Ըստ հիմնավորման՝ այսօր թատրոնի ակտիվ խաղացանկում կա ավելի քան 40 ներկայացում ինչպես մանուկների, այնպես էլ մեծահասակների համար՝ ապահովելով ժանրային բազմազանությունը: Թատրոնը մշտապես ակտիվորեն մասնակցել է մոտ 100 միջազգային փառատոնների: Իր գործունեության ընթացքում թատրոնում բեմադրվել է ավելի քան 435 ներկայացում, որին ներկա են գտնվել ավելի քան 5.000.000 հանդիսատես: Թատրոնը երբեւէ չի դադարեցրել իր գործունեությունը, անգամ՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Երեւանի Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնը հանդիսանում է Հայաստանի մշակութային առաջատար թատերախմբերից մեկը եւ ծավալած գործունեությամբ նպաստում է ոչ միայն հայ տիկնիկային արվեստի զարգացմանը, այլեւ մանուկների գեղագիտական դաստիրակության ապահովմանը: Թատրոնի ստեղծագործական կազմը իրականացնում է մասնագիտական վերապատրաստում, աջակցում համայնքային տիկնիկային թատերախմբերի խաղացանկի ձեւավորմանը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում թատրոնն էապես բարձրացրել է տիկնիկային արվեստի որակը, հայ տիկնիկային արվեստի ներկայացվածությունը միջազգային հարթակներում, մասնագիտական աջակցություն է ցուցաբերել համայնքային թատրոններին, էապես նպաստել է տիկնիկավարների դպրոցի կայացմանը: Միեւնույն ժամանակ, թատրոնն իր իրականացված գործունեությամբ խթանում է ՀՀ-ում տիկնիկագործության զարգացումը եւ տիկնիկային արվեստի ժամանակակից ու նորարական մեթոդների ներդնումը: Արդյունքում ակնկալվում է ֆինանսական միջոցների ավելացում, միջազգային հարթակում ավելի լայն կապերի հաստատման եւ նոր գործունեության ապահովում:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՌՈՔ ԱՍՏՂԻ ՈՐԴԻՆ ՍՊԱՆԵԼ Է

Ողբերգություն է տեղի ունեցել ռուս ռոք աստղ Ստաս Նամինի ընտանիքում. երրորդ կնոջից նրա խորթ որդին՝ Ռոման Միկոյանը, սառնասրտորեն սպանել է եղբորը՝ Արտեմին, եւ տատիկին՝ Պոլինա Տկաչենկոյին: Ամեն ինչ տեղի է ունեցել մերձմոսկովյան Իստրայում գտնվող տնակներից մեկում. գրում է StarHit-ը:

Պարզվել է, որ Ստաս Նամինը վաղուց չի շփվում Ռոմանի հետ, ում համար ժամանակին փոխարինել է սեփական հորը: «Ես հենց նոր իմացա այս մասին. սա սարսափելի ողբերգություն է: Ռոմանը երբեք իմ որդին չի եղել, նա իմ նախկին կնոջ՝ Գալինայի որդին է նրա առաջին ամուսնությունից: Նա միշտ եղել է տականք ու ստոր մարդ: Ես երկար տարիներ չեմ շփվել նրա հետ, քանի որ նա միշտ անարժան եւ ցածր է եղել: Նա երբեք իմ հարազատը չի եղել»,-լրագրողների հետ զրույցում խոստովանել է ռոք արտիստը:

Սկզբում ենթադրվում էր, որ Ռոմանն իր 30-ամյա եղբոր եւ 85-ամյա տատիկի հետ այդպես է վարվել գույքային վեճերի պատճառով: Ինչպես հայտնի է դարձել հարցաքննության ժամանակ, հարազատների միջեւ կոնֆլիկտը ծագել է Միկոյանի կախվածության պատճառով. նա թմրանյութ է օգտագործել: Նրան դուր չէր գալիս, որ իր սիրելիները հաճախ ճնշում էին իրեն բարոյական ուսմունքներով:

Հանցագործություն կատարելուց հետո Նամինի խորթ որդին ինքն է կանչել իրավապահներին: Այդ պահին նա գտնվում էր թմրամիջոցների ազդեցության տակ: Այժմ մարդասպանը սպասում է դատական նիստին, որտեղ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվելու:

«Իստրինսկի շրջանի դատախազությունը վերահսկողության տակ է վերցրել քննչական մարմնի կողմից հարուցված քրեական գործի ընթացքը եւ արդյունքները: Հետաքննության տվյալներով՝ 2023 թվականի հոկտեմբերի 19-ի գիշերը Կրյուկովո գյուղի առանձնատանը հայտնաբերվել են 1938 թվականին ծնված կնոջ եւ նրա 30-ամյա թոռան դիերը: Հանցագործության մեջ կասկածվողը ձերբակալվել է իրավապահների կողմից»,- հայտնել են դատախազությունից:

Պարզվել է, որ Ռոման Միկոյանը նախկինում դատվածություն է ունեցել. 2007թ-ին մայրաքաղաքում հարվածել ու սպանել է մի կնոջ: Այնուհետեւ տղամարդը պայմանական ազատազրկման է ենթարկվել: Ի թիվս այլ բաների՝ Ռոմանը մեկ անգամ չէ, որ հայտնվել է տհաճ իրավիճակներում եւ բազմաթիվ խնդիրներ առաջացրել իր ընտանիքի համար:

ՍՊՈՐՏ

ԲՈՐՈՒՍԻԱՅԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Դորտմունդի «Բորուսիան» պատրաստ է ձմռանը վարձակալել անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» անգլիացի կիսապաշտպան Ջեյդոն Սանչոյին մինչեւ մրցաշրջանի ավարտը՝ պայմանով, որ մանչեսթերյան ակումբը կվճարի ֆուտբոլիստի աշխատավարձի զգալի մասը. հաղորդում է ESPN-ը: 23-ամյա ֆուտբոլիստը ստանում է շաբաթական 300 հազար ֆունտ ստերլինգ:

Ջեյդոն Սանչոն այժմ լարված հարաբերություններ ունի «Մանչեսթեր Յունայթեդի» հոլանդացի գլխավոր մարզիչ Էրիկ տեն Հագի հետ եւ դուրս է մնացել հիմնական կազմից: Նա չի մարզվում գլխավոր թիմի հետ:

Ջեյդոն Սանչոն 2021 թվականին Դորտմունդի «Բորուսիայից» է տեղափոխվել «Մանչեսթեր Յունայթեդ»:

ՉԵՆ ՀԻԾՈՒՄ ԼՈՒԿԱԿՈՒԻՆ

Իտալիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր Միլանի «Ինտերի» գլխավոր տնօրեն Ջուզեպե Մարոտան խոսել է թիմի նախկին հարձակվող, բելգիացի Ռոմելու Լուկակուի մասին, որը այս մրցաշրջանը վարձակալությամբ անցկացնում է «Ռոմայում»: Նրա տրանսֆերային իրավունքը պատկանում է Լոնդոնի «Չելսիին»:

«Լուկակուն մարմնավորում է մեր անցյալը: Դա ընդամենը այն է, ինչ մեզ հետ կատարվել է նախկինում: «Ինտերում» նրա մասին ոչ ոք չի մտածում, նրան ոչ ոք չի հիշում:

Նրա վարքը պետք չէ մեկնաբանել: Այդպես պատահում է ֆուտբոլում: Առաջին ու վերջին դեպքը չէ»,- Մարոտայի խոսքը մեջբերում է La Gazetta dello Sport-ը:

Լուկակուն «Ինտերում» անցկացրել է երեք մրցաշրջան՝ 132 խաղում խփելով 78 գոլ:

Ամռանը հայտնի էր դարձել, որ Լուկակուն գաղտնի բանակցել է «Յուվենտուսի» հետ, սակայն համաձայնության չի հասել:

ԱՋԱԿՑՈՒՄ Է ՆԵՅՄԱՐԻՆ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի եւ ամերիկյան «Ինտեր Մայամիի» 36-ամյա հարձակվող Լիոնել Մեսին սոցիալական ցանցերում արած գրառումով աջակցություն է հայտնել Բրազիլիայի հավաքականի եւ Սաուդյան «Ալ Հիլալի» 31-ամյա հարձակվող Նեյմարին, որը ծնկի վնասվածք է ստացել եւ վիրահատվելու է:

«Շատ ուժ եմ մաղթում քեզ»,- գրել է Մեսին:

Նեյմարը վնասվածքը ստացել էր Ուրուգվայի թիմի դեմ 2026 թվականի աշխարհի առաջնության ընտրական խաղում: Բրազիլիան պարտվել էր 0:2 հաշվով: Նեյմարը բաց կթողնի կես տարի:

● *Հոկտեմբերի 21-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Գնա մեռի, արի սիրեմ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ կարող են արդյոք պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրվել կառուցապատման իրավունքով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչպես կարող է տնօրինվել հողամասի կառուցապատման իրավունքը:

Արտակ Մուրադյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից: Կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաեւ կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ աջակցող միջոցներ են տրամադրվում հաշմանդամություն եւ սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց:

Կիմա Առաքելյան (66 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տրամադրվում են հետեւյալ աջակցող միջոցները՝ պրոթեզներ (վերին եւ ստորին վերջույթի), կրծքագեղձի էկզոպրոթեզ, ակնագնդի պրոթեզ, ձայնաստեղծ սարքեր/պրոթեզներ, օրթեզներ, անվասայլակներ, գուլպաներ (անդամահատված ծայրատի համար), լսողական սարքեր, լսողական սարքերի անհատական ներդիրներ, աղեկապեր, սեղմիրաններ, հենակներ, ձեռնափայտեր, քայլակներ, ծնկակալեր, ռեկլինատորներ, կոշիկներ (օրթոպեդիկ, պրոթեզի, օրթեզի):

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գնահատված կարիքների համաձայն՝ խնամքի ծառայությունները տրամադրվում են ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հարվարդի համալսարանի ուսանողները պառկած բողոքի ակցիա են իրականացրել՝ պահանջելով դադարեցնել արյունահեղությունը Գազայում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



	Շիրակ	0 + 4 +12 + 16
	Կոտայքի լեռներ	+ 5 + 8 +10 + 14
	Կոտայքի նախալեռներ	+ 9 + 11 +12 + 14
	Գեղարքունիք	+ 3 + 8 +7 + 12
	Լոռի	+ 4 + 9 +10 + 13
	Տավուշ	+ 7 + 10 +11 + 15
	Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 +9 + 13
	Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 10 + 12 + 15

	Արարատ	+10 + 13 +15 + 17
	Արմավիր	+10 + 12 + 15 + 17
	Վայոց ձորի լեռներ	+ 1 + 3 +11 + 15
	Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10 +20 + 24
	Սյունիքի հովիտներ	+10 + 13 +20 + 22
	Սյունիքի նախալեռներ	+ 3 + 8 + 9 + 14
	ԼՂՀ	+ 6 + 9 +15 + 19
	Երեւան	+ 5 + 10 +18 + 21

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*